Անվտանգություն եւ առաջընթաց

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 1 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1730: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

ՀՀԿ

ՇԱԲԱԹ, 11 ՄԱՐՏԻ 2017Թ.
№ 10 (428)

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Հարցազրույց օրվա թեմայով

ԱՎԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ.

«Կառուցապատել եւ շենացնել, օգնել եւ ձեռք մեկնել, սրանք են իմ գերագույն նպատակները»

ՍՅՈՒՆՅԱՑ

Սարգսյան Ավետ Լավրենտիի. ծնվել է 1968թ. սեպտեմբերի 22-ին Սիսիան քաղաքում:
1975-1985թթ. հաճախել է Սիսիանի թիվ 2 միջն դպրոցը:
1985-1992թթ. սովորել է Հայկական գյուղատնտեսական ինստիտուտում:
1987-1989թթ. ծառայել է խորհրդային բանակում:
1992թ. աշխատել է «Սպանդարյան» հէկի շինվարչությունում՝ գլխավոր ինժեներ:
1997-1999թթ. «Որոտան» հէկում աշխատել է փոխտնօրեն իրացման գծով:
1999-2004թթ. աշխատել է «Սպանդարյան» հէկի շինվարչության պետ:
2004 թվականից մինչ օրս ղեկավարում է «Հիդրո» ՍՊ ընկերությունը:
ՀՀԿ անդամ է 2000 թվականից:
Ամուսնացած է, ունի երեք երեխա:
Բանակաշինության գործում ունեցած մեծ ավանդի համար ՀՀ պաշտպանության նախարարի կողմից արժանացել է մեդալի եւ պատվոգրերի:

Հարգելի հայրենակիցներ
Հայաստանի հանրապետական կուսակցությունը թիվ 12 ընտրատարածքում որպես Ազգային ժողովի պատգամավորի թեկնածու է առաջադրել նաեւ ինձ՝ Ավետ Լավրենտիի Սարգսյանիս:
Ընտրվելու դեպքում ես ձգտելու եմ մեր տարածաշրջանում անել ամեն ինչ, որ Մեսրոպյան այբուբենի էությունը նոր ընկալող աշակերտից մինչեւ խոր ծերություն ապրող հայն ապրի արժանապատիվ կյանքով, դեն նետի պանդուխտի ցուպը, վերջ դնի անհեռանկար դեգերումներին, վառ պահի իր օջախի ծուխը:
Այսուհետեւ մեր տարածաշրջանի խնդիրները պետք է բարձրաձայնվեն Ազգային ժողովում եւ իրենց կոնկրետ լուծումը ստանան: Շինարարի իմ հմտություններն ու հնարավորությունները ներ եմ դնելու՝ ի նպաստ մեր տարածաշրջանի համայնքների:
Ես խոսքիս տերն եմ:
Կառուցապատել եւ շենացնել, օգնել եւ ձեռք մեկնել. սրանք են իմ գերագույն նպատակները:

ԱՎԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի թեկնածու

Հայաստանի հանրապետական կուսակցությունը թիվ 12 ընտրատարածքում Աժ պատգամավորի թեկնածու է առաջադրել նաեւ Ավետ Լավրենտիի Սարգսյանին, ով դեռեւս երիտասարդ տարիներից ճանաչում է բերել Սիսիանի տարածաշրջանի շինարարության ոլորտին:
Ավետ Սարգսյանը հայտնի գերդաստանի զավակ է. հայրը Լավրենտի Սարգսյանն է, ով երեք անգամ՝ 1999, 2002, 2005 թվականներին ընտրվել է Սիսիան համայնքի ղեկավար:
Շինարարական ակտիվ գործառնությունից՝ խորհրդարանական աշխատանք: Ինչո՞վ է պայմանավորված այս անցումը, որքանո՞վ է Ավետ Սարգսյանը պատրաստ կատարելու Աժ պատգամավորի պարտականությունները, որքանո՞վ է պատկերացնում նոր խորհրդարանի դերը փոփոխված սահմանադրությամբ ձեւավորվող խորհրդարանական կառավարման պայմաններում:
Այս եւ նմանատիպ մի շարք հրատապ հարցերի պատասխանները ստանալու ակնկալիքով զրուցեցինք պատգամավորի թեկնածու Ավետ Սարգսյանի հետ, ով էլ սիրով փորձեց կիսել իր խոհերը, պատկերացումները, նշել այն ուղիները, որով ընթանալու, առաջնորդվելու է:

– Պարո՛ն Սարգսյան, Դուք հայտնի գերդաստանի ճանաչված զավակ եք Սիսիանի տարածաշրջանում:

Եթե հարցնենք սիսիանցիներին, թե Ձեր բնավորության խառնվածքի «նժարին» ո՞ր դրական հատկանիշներն են գերակշռում, շատերը կհավաստեն՝ բարությունը, ազնվությունը, անշահախնդրությունը, կառուցել-արարելու ձիրքը: Անշուշտ, դրանք նշանակալից դեր են խաղում մարդու կյանքում:

Բայց թիվ 12 ընտրատարածքի աշխարհագրությունը բավականին ընդարձակ է՝ եղեգնաձորից մինչեւ Մեղրի, ուստի Ձեզ ներկայացնելու խնդիր ունեք:

– Ուզում եմ անկեղծորեն շնորհակալություն հայտնել Սարգսյանների գերդաստանին տրված բարձր գնահատականի համար, մեկ անգամ եւս հպարտանալ ինը տարի անընդմեջ Սիսիան քաղաքը ղեկավարած Լավրենտի Սարգսյանով, ում ներդրումը, շինարարի ուրույն ձեռագիրը դաջված է բազում շենք-շինությունների ճակատին: Ես սիրով, մեծ պատասխանատվությամբ եմ շարունակել եւ շարունակում հորս հայրենանվեր գործը՝ աշխատելով «Սպանդարյան» հէկի շինվարչությունում, որպես գլխավոր ինժեներ, իրացման գծով փոխտնօրեն, ապա շինվարչության պետ: Այժմ ղեկավարում եմ «Հիդրո» ՍՊ ընկերությունը:

– Արդեն նշեցիք, որ Դուք ճանաչված եք հատկապես շինարարության ոլորտում: Կարո՞ղ եք թվարկել առանձնակի նշանակության կարեւոր կառույցներ, որ կյանքի են կոչվել Ձեր ղեկավարությամբ, որոնցով հպարտանում եք ոչ միայն Դուք:

– Անթաքույց հպարտությամբ եմ նշում, որ իմ կառուցած բնակշենքերում բնակարանամուտ են տոնում ե՛ւ զինվորականը, ե՛ւ փախստականը, ե՛ւ սիսիանցին, որ այդ օջախները ծաղկում են, որ դրանցում ծնվում են փոքրիկներ, ու շարունակվում է կյանքը… Ավարտվել է Աղիտուի հոսպիտալի վերանորոգումը, Նորավանի զորանոցի հիմնանորոգումը, իսկ ավելի վաղ կառուցածներից հիշարժան է հատկապես Աշոտավանի կաթողիկե Սբ Խաչ եկեղեցին:

▶ 2

Հարցազրույց օրվա թեմայով

ք.Սիսիան , համայնապատկեր

ԱՎԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ. «Կառուցապատել եւ շենացնել, օգնել եւ ձեռք մեկնել, սրանք են իմ գերագույն նպատակները»

▶ 1

– Հետաքրքիր ճանապարհ է անցել Ձեր գերդաստանն անկախության տարիներին, միայն չորս անգամ հայր եւ որդի Սարգսյանները սիսիանցի ընտրողների կամքով ընտրվել են Սիսիանի համայնքի ղեկավար: Ո՞րն է այդ հաղթարշավի հաջողության բանալին...

– Հայրս լավ շինարար է: Գաղտնիք չէ, որ ինքն է ղեկավարել ռազմավարական կառույցների շինարարությունը մեր տարածաշրջանում: Աշխարհ տեսած, աշխարհ սիրող, աշխարհին նվիրված, մարդասեր անձնավորություն է: Սիսիանի տարածաշրջանում չի գտնվի մեկը, ում ծանոթ չլինի այդ անունը, ում անունն անվերապահորեն կապվում է Սիսիանի հասարակական-քաղաքական կյանքին՝ ունենալով ուրույն աշխատաոճ, ինքնատիպ ձեռագիր: Ես արժանի չեմ լինի նրա զավակը կոչվելու, եթե չշարունակեմ նրա՝ ժողովրդին ծառայելու, բարեհոգի, հյուրամեծար լինելու հատկանիշները:

– Ի՞նչ եք կարծում, կկարողանա՞ք շարունակել այդ հաղթարշավը:

– Նա, ով չի հավատում առաջընթացին, չի գնահատում լավը, բարին, գեղեցիկը, չի ձգտում հաղթահարել դժվարությունները, ով վստահ չէ իր ուժերին՝ ցանկացած բնագավառում, չի կարող վստահության արժանանալ:

Ես ավելի քան համոզված եմ, որ ընտրվելու դեպքում գործով կապացուցեմ ծրագրածս, կարդարացնեմ խոստումներս, եւ ընտրողը կտեսնի կիասնի նախընտրական խոստումներս կյանքի կոչելու պատասխանատու գործընթացը:

– Պարոն Սարգսյան, խիստ քաղաքականացված այս ժամանակաշրջանում, բազմակուսակցական համակարգում ինչո՞ւ ՀՀԿ, ինչո՞ւ Ավետ Սարգսյան:

– ՀՀԿ-ին անդամակցում եմ 2000 թվականից: Ինչո՞ւ ես. հաստատապես կարող եմ ասել, որ այդ պարագայում հաշվի են առնվել նվիրվածությունը, համընդհանուր ճանաչումը, հնարավորություններն ու կարողությունները, հայրենի եզերքի հոգսերով ապրելու, արարելու մեծ ցանկությունը:

ՀՀԿ-ն, անշուշտ, ունի Հայաստանի Հանրապետության կերտման անխախտ նպատակ՝ հիմնադրման օրվանից ցայսօր: Ինձ հոգեհարազատ են ՀՀԿ հաստատուն, հիմնավոր հայացքները:

– Կարելի՞ է պատգամավորի աշխատանքը համարել նախ եւ առաջ քաղաքական ասպարեզ: Եթե այո՝ ինչո՞ւ որոշեցիք զբաղվել քաղաքականությամբ: Հե՞շտ էր որոշում կայացնելը:

– Լինելով կուսակցական՝ չեմ կարող պասիվ լինել: Առաջին հայացքից կարող է դյուրին թվալ քաղաքականությամբ զբաղվելը, բայց... Անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր քաղաքական գործիչ զգա այն մեծ պատասխանատվությունը, որ իրենից պահանջվում է, այդ դեպքում այնքան հեշտ չի լինի գնալ դրան:

Պետք է բացառել պասիվ դիրքորոշումը կյանքում, եթե աշխատում ես՝ աշխատիր նվիրված, եռանդով, պատասխանատվությամբ…

– Կուսակցական-քաղաքական գործիչ եւ մարդ, որքանո՞վ են համատեղելի:

– Լինել կուսակցական-քաղաքական գործիչ, չի նշանակում ձերբազատվել մարդկային դրական որակներից, ավելին՝ իմ խորին համոզմամբ, յուրաքանչյուր կուսակցության ամեն մի անդամ պատասխանատու է իր քայլի համար, քանի որ ինքն է կերտում իր կուսակցության հեղինակությունը:

– Ո՞ւմ եք մրցակից համարում թիվ 12 ընտրատարածքում:

– Պետք չէ բորբոքել կրքերը, այլ՝ օգնել, հուշելով, քննարկելով, աջակցելով, եթե քննադատել, ուրեմն՝ առողջ քննադատություն, այդ դեպքում իսկապես արժանավորը ձեռքը կառնի ժողովրդի կյանքը կառավարելու այցետոմսը:

Մեր ժողովուրդը պատվախնդիր է, խելացի, իմաստուն մեր ժողովուրդը քիչ է սխալվում, համոզված եմ՝ նաեւ այս անգամ:

Ես արդար ընտրությունների կողմնակից եմ:

Թող ընտրվի նա, ով արժանի է իր ժողովրդին: Իսկ թե ով է այդ արժանավորը, ցույց կտա ընտրապայքարը:

– Անապահով, սոցիալապես անպաշտպան խավը որքանո՞վ կհետաքրքրվի քաղաքականությամբ, քանզի գաղափարներով դժվար որեւէ մեկին գայթակղես, առավել եւս կերակրես:

– Եթե ապրիլի 2-ին քվեատուփին մոտեցողը ճիշտ, կշռադատված քայլ կատարի, ծանրութեթեւ անի, թե որ դաշինքին, կուսակցությանը, անձին նախապատվություն տա, եթե այդ պատասխանատու պահին հիշի քաղաքացիական իր պարտքը երկրի հանդեպ, ապա դժվար թե սխալ ընտրություն կատարի: Եթե ընտրողն ունկնդրի իր եսին, կարծում եմ՝ փոքր կլինի սխալվելու հավանականությունը:

– Ազգային ժողովի ո՞ր մշտական հանձնաժողովում եք տեսնում Ձեր պատգամավորական գործունեությունը:

Եթե Ձեր ձեռքում լինի պատգամավորական մանդատը, ո՞ր հարցերին լուծում կտայիք առաջնահերթ:

– Անշուշտ, հոգեհարազատ ոլորտի՝ քաղաքաշինության ոլորտում եմ տեսնում իմ գործունեությունը, բայց, բնականաբար, ուշադրության կենտրոնում կպահեմ անապահով, սոցիալապես անպաշտպան խավին, ականջալուր կլինեմ նրանց առաջարկներին եւ հնարավորինս լուծում կտամ նրանց մտահոգող հարցերին:

Չեմ կարծում, թե հիմնախնդիրները կարելի է դասակարգել գլխավորի եւ երկրորդականի: Այլ խնդիր է, որ այս կամ այն հիմնախնդիրը կյանքի կոչելու ինչպիսի պայմաններ կառաջարկվեն պետականորեն:

– Ցավով եմ ուզում արձանագրել, որ անկախության տարիներին մեր երկրամասը՝ Սյունիքը, ԱԺ-ում շատ թե քիչ կայացած պատգամավոր չի ունեցել: Հիմա էլ մտավախություն կա, թե Սյունիքում կկարողանա՞նք գոնե այս անգամ հաջողված պատգամավոր ընտրել: Ո՞ր հատկանիշներով պետք է օժտված լինի Ազգային ժողովի պատգամավորը:

– Գուցե միտքս երկրորդում եմ, բայց ես գործի մարդ եմ: Իմ կարծիքով՝ նա, ով իրապես ժողովրդի հոգս ու ցավին ականջալուր կլինի, վեր կհանի, կներկայացնի, կփորձի լուծում տալ հիմնախնդիրներին:

– Իսկ Դուք կարո՞ղ եք արժանավոր պատգամավոր լինել մեր երկրի օրենսդիր մարմնում, մանավանդ որ նոր սահմանադրության պայմաններում առավել լուրջ դերակատարում է վերապահված խորհրդարանին՝ ՀՀ կառավարման գործում:

– Ժամանակից առաջ չընկնենք, հասնենք այդ պատասխանատու, պատմական օրվան. համոզված եմ՝ ժողովուրդը չի ափսոսա ինձ տված քվեի համար, որովհետեւ ես իսկապես ծառայելու եմ ժողովրդին, մնում է միայն վստահությունը հաստատեն քվեարկությամբ:

– Պարոն Սարգսյան, անշուշտ, բարեմաղթանքներ հղելու ցանկություն կունենաք՝ որպես թիվ 12 ընտրատարածքի պատգամավորության թեկնածու:

– Կարծում եմ՝ որեւէ այլ պարագայում ես չեմ կորցնի դեմքս, կշարունակեմ լինել մարդկային լավագույն հատկանիշներին հասու:

Ընտրվելու դեպքում ձգտելու եմ մեր տարածաշրջանում անել ամեն ինչ, որ դպրոցական տարիքի երեխաներից մինչեւ խոր ծերություն ապրող հայն ապրի արժանապատիվ կյանքով, դեն նետի պանդուխտի ցուպը, վերջ դնի անհեռանկար դեգերումներին, վառ պահի հայ օջախի ծուխը:

Այսուհետեւ մեր տարածաշրջանի խնդիրները պետք է բարձրաձայնվեն ԱԺ-ում եւ իրենց կոնկրետ լուծումը ստանան: Շինարարի իմ հմտություններն ու կարողությունները ներ եմ դնելու՝ ի նպաստ մեր տարածաշրջանի: Ես խոսքիս տերն եմ: Կառուցապատել եւ շենացնել, օգնել եւ ձեռք մեկնել, սրանք են իմ գերագույն նպատակները:

Ես գործի մարդ եմ եւ ոչ լոկ խոսքի…

– Շնորհակալություն, պարոն Սարգսյան, հարցազրույցի համար: Հաջողություն ձեզ:

**Հարցազրույցը՝
ԷՎԵԼԻՆԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ**

Պտուղը ծառից ճանաչիր

ՀՀԿ կողմից Ազգային ժողովի պատգամավորի թեկնածու առաջադրված Ավետ Լավրենտիի Սարգսյանին մի քիչ հեռվից գիտեի՝ իր հիդրոշինարար հոր՝ Լավրենտի Սարգսյանին ճանաչելով, Սիսիանում հիմնադրած եւ իր տնօրինությամբ գործող «Հիդրո» ՍՊ ընկերության գործունեության ակունքներից:

Ավետին չճանաչողները սոսկ նրա համառոտ կենսագրությունը կարդալով՝ ամբողջական կարծիք չեն կարող ունենալ նրա մասին: Ահա այն. ծնվել է Սիսիանում 1968 թվականին, ավարտել է քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցը, սովորել գյուղատնտեսական ինստիտուտում, ծառայել խորհրդային բանակում: Աշխատել է «Որոտան» հէկի շինվարչությունում՝ գլխավոր ինժեներ, այնուհետ՝ փոխտնօրեն իրացման գծով, «Սպանդարյան» հէկի շինվարչության պետ:

Տասնյոթ տարի է՝ ՀՀԿ անդամ է, իսկ 2004 թվականից հիմնադրել եւ ղեկավարում է «Հիդրո» ՍՊ ընկերությունը:

Առաջին հայացքից ոչ մի արտասովոր բան չկա այս կենսագրության մեջ, այն, կարելի է ասել, հատուկ է մի ողջ սերնդի, ով ծնվել, որոշակի կայացման փուլ է անցել խորհրդային համակարգում եւ իր հետագա գործունեությունը ծավալել գեներով կանխորոշված, Սարգսյան շինարար գերդաստանի ճակատի գիր հիդրոշինարարության, քաղաքաշինության ոլորտում:

Նրա համար ամենեւին էլ կարեւոր չէր, թե որ կուսակցության դիրքերից է իր երկիրն առաջնորդվում, ով էլ լիներ նրա առաջնորդը, նա կանգնելու էր իր երկրի, իր պետության կողքին: Կարեւորը երկրի շահն է: Երեւի թե սա հայրական դաստիարակության առաջին նախապայմանն է եղել, որով առաջնորդվել են զավակները:

Ուրիշ կերպ հնարավոր էլ չէ պատկերացնել հայ շինարարին, ով գլուխը կախ քարը քարի վրա է դնում, ջրամբարներ, շենքեր ու շինություններ կառուցում, ջուր եւ լույս հասցնում հեռավոր գյուղեր, բռնում իր հոգսաշատ երկրի, նրա քաղաքացու՝ օգնություն ակնկալող ձեռքը, մատից մի փուշ հանում…

Իսկապես, միայն առաջին հայացքից կարելի է կարծել, թե արտասովոր ոչինչ չկա Ավետի կենսագրության մեջ, եթե դու ամռան շոգին, թե ձմռան սառնաշունչ օրերին մի քանի ակնթարթ չես եղել նրա ղեկավարությամբ կառուցապատվող շինհրապարակներում, կիսակառույց կամ ավարտին հասցված շենքերի կողքին եւ թեկուզ հպանցիկ՝ չես զննել նրա ինքնամոռաց, հեռախոսազանգերի, փոշու ամպի, թափվող ձյան մեջ խճճված, ամեն տաշվող ու տեղադրվող քարի հետ գերլարվող կերպարը:

Այդ առիթն ունեցել եմ տարիներ առաջ, երբ լրագրողական խմբով Լավրենտի Սարգսյանի հետ շրջում էինք Սիսիանում՝ Սահյանածորից մինչեւ տարածաշրջանում խոյացող կառույցներ:

Նման իրավիճակում այդ պարզ ու հասարակ մարդուց հետք էլ չի մնում. նա հեռու է արդեն երկրի քաղաքական կյանքով ապրող Ավետ լինելուց, նույնիսկ չես էլ կասկածում կամ մտաբերում նրա կուսակցական պատկանելությունը, որն այնքան անկարեւոր է ի վերջո: Նա ուղղակի հայ է, շինարար ու ստեղծարար մարդ, ով իր առջեւ խնդիր է դրել իր փոքր հայրենիքը մի նոր շինությամբ կահավորել, բարեկարգել երկրի սահմանը պահող զինվորի կացարանը, նոր զորանոց կամ բնակելի շենք

կառուցել…

Իսկ պաշտպանության նախարարության շնորհակալագրերը, պատվոգրերն ու մեդալը հետո են գալիս եւ հանգրվանում հայրական օջախի պատվո անկյունում:

Ամենաշատն ինձ զարմացրին շինարար Ավետի զուսպ կեցվածքն ու համեստությունը, երբ նրան հարցրի՝ ընտրողներն ինչպե՞ս կարող են ճանաչել Ավետ Սարգսյան պատգամավորի թեկնածուին:

– Նախեւառաջ հորս՝ Լավրենտի Սարգսյանի միջոցով, դա արդեն բավական է, որպեսզի իմանան՝ ով եմ ես:

Տեսեք, Ավետն ամենեւին չհիշատակեց էլ այլ հանգամանքներ:

Մինչդեռ, Ավետի հայրը դեռ մի քանի տարի առաջ տված հարցազրույցում հպարտությամբ ասում էր՝ «Ոչ միայն ավագ, նաեւ նոր սերունդն ինձ արդեն ճանաչում է որդիներիս միջոցով, եւ դա իմ ամենամեծ ձեռքբերումն է»:

Ուզում էի միջամտել՝ «Ավետ, քեզ արդեն ճանաչում են հենց քո գործերով… », բայց լռեցի. համեստությունը դեռ ոչ մեկին չի խանգարել, մանավանդ, երբ հարցը վերաբերում է ծնողներիդ հետ համեմատվելուն:

Ավետը բնույթով է համեստ ու քչախոս, ինչը հատուկ է միայն գործի մարդուն՝ բնորոշ մեր սերնդի այն գերդաստանների զավակներին, երբ հայրերը զբաղված են եղել երկրաշինությամբ, երկիր կառուցելով, կարեւոր եւ պատասխանատու պաշտոններում լուռ եւ տքնաջան աշխատանքով, իսկ զավակները կողքից նայել ու դաս են առել:

Ահա այսպիսի մի երկրաշեն գերդաստանի զավակ է նաեւ Ավետը, ում երկու-երեք տարի առաջ առաջին անգամ տեսել եմ իր հայրական օջախում: Ուրիշ որտե՞ղ կարող ես մարդուն ավելի լավ ճանաչել, քան իր սեփական հարկի տակ՝ հայրական օջախում:

Հայրը՝ հիդրոշինարարության հսկան, կաղնու պես թիկն էր տվել բազմոցին, վաստակած գոհությամբ ու հպարտությամբ նայում էր իր շուրջը համախմբված որդիներին՝ Ավետին, այսօր արդեն Սիսիանի քաղաքապետ Արթուրին: Նա ամիսներ առաջ էր վիրահատություն տարել, բայց որդիները շարունակում էին նույն հոգատարությամբ շրջապատել նրան, տագնապել, որպեսզի հանկարծ ինքնուրույն տեղաշորից չելնի ու «չփախչի» իր հիմնած Սահյանածորի այգիները, չաշխատի այնտեղ ու չմրսի… Կամ դուրս չգա շինհրապարակ եւ աշնան ցրտին հետեւի «Հիդրո» ՍՊ ընկերության շինարարական աշխատանքներին, որովհետեւ Լավրենտի Սարգսյանն աշխատանքներին սոսկ հետեւելով չէր բավարարվում. նա շարունակում էր ապրել իր քաղաքի կառուցապատման հոգսով ու գործով, հրահանգներ ու խորհուրդներ տալ որդիներին, զայրանալ ծուռ դրվող ստորակետով… Իսկ բժիշկներն արգելել էին այդ ամենը…

Ահա թե ինչու էին որդիներն աչալուրջ հսկում վիրահատված, բայց տեղը հանգիստ չնստող հորը:

Այսքանը բավական էր, որպեսզի ես ճանաչեի Ավետ Սարգսյանին, ով թեպետ աշխատանքային մեծ փորձ ու վաստակ ուներ արդեն, բայց իսկական դպրոցականի, անփորձ պատանու պես ակնապիշ լսում էր հորը, երբ հայրն էր խոսում:

Իսկ հիմա բազմազբաղ Ավետին մի կերպ հաջողվել է եղբոր աշխատասենյակ «բերման ենթարկել» եւ խաչաձեւ հարցազրույցում հարցախեղդ անել:

Գործի մարդ, խոսել չսիրող, նոր՝ պատգամավորի թեկնածուի սպասվող ծանր բեռն էլ ուսերին:

Երկարաշունչ, բազմաբնույթ եւ ենթատեքստերով հարուստ հարցերին կարճ էր պատասխանում. *«Շինարարի իմ հմտություններն ու հնարավորությունները ներկդնեմ, տարածաշրջանի հարցերը առաջ կքաշեմ, կգործեմ հավասար՝ օրենսդրական, թե գործադիր դաշտում, կծգտեմ եւ անպայման կհասնեմ կոնկրետ լուծումների, նպատակս երկիրը շենացնելն է, հայ օջախները ծխեցնելը… Պանդուխտի ցույը պետք է վերանա մեր երկրից… »:*

Վերջում Ավետ Սարգսյանն իրեն հատուկ պարզությամբ ուղղակի ասաց.

– Իմ ընտրողը, կարծում եմ, կվստահի ինձ՝ նայելով գործերիս, շինարար արմատներիս… Բայց, միեւնույն է, չընտրվելու դեպքում էլ նույն իմ գործն եմ անելու, կառուցապատելու եւ շենացնելու եմ երկիրս: Ով էլ ընտրվի՝ Այունիքից մինչեւ Վայոց ձոր, համոզված եմ, մեզ հուզող հարցերը երկրի խորհրդարանում արժանապատիվ ներկայացնելու խնդիր է ունենալու:

Իսկ ինձ մեկ հարց էր մտահոգում՝ Ավետի, որքան էլ շոյիչ՝ համեստությունը… Ինչպե՞ս է կարողանալու պատգամավորներով լի բազմակուսակցական, անկանխատեսելիորեն տրամադրված դահլիճում բարձրաձայնելու որեւէ հարց…Ինքը պատկերացնո՞ւմ է այդ պահը…

Հարցը ոչ միայն մեր մտքում ու սրտում էր, եւ լսեցինք Ավետի՝ մարտահրավերի պես հնչող պատասխանը.

– Այո, պատկերացնում եմ եւ շատ լավ էլ բարձրաձայնելու եմ… Մանավանդ որ այդ հարցերը հիմնականում իմ՝ քաղաքաշինության ոլորտից են լինելու, մանավանդ որ դրանք մեր երկրամասին, մեր հայրենիքին են վերաբերվելու…

Այլ բան չէր մնում, քան ողջունել Ավետի ձգտումը՝ ընտրվելու Հայաստանի Հանրապետության խորհրդարանի անդամ, եւ հրաժեշտն ամփոփել մաղթանքով ու հիմնավոր հավատով, սպասումով.

- Դե, Ավետ, ասել ես, հետեւելու ենք… Քեզ՝ հաղթանակ:

Ավետ Սարգսյանին վայել այսպիսի պարզ ու հակիրճ պատում՝ մի շատ իմաստուն վերջնակորդով. պտուղը ծառից ճանաչիր, ընտրող…

ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝
կյանքի կոչված Ավետ Սարգսյանի ղեկավարությամբ

Նորավանի զորամասը՝ նոր տեսքով

Ծղուկի միջն. դպրոցը՝ վերանորոգված ուրույն ոճով

Աղիտուի զինվորական հոսպիտալը՝ հիմնանորոգումից հետո

Աշոտավանի Սուրբ Խաչ եկեղեցին (2008թ.)

Սիսիան քաղաքի նորացված մուտքը

Միայն՝ Ավետ Սարգսյանին

ՎԱՐԴՈՒՀ ԲԱԼՅԱՆ
Ուսուցչուհի

Ես հպարտանում եմ

Հպարտ եւ բացճակատ կարող եմ ասել՝ Ավետ Սարգսյանն իմ աշակերտն է, այն աշակերտը, ում մեջ դեռեւս շատ տարիներ առաջ եմ տեսել մարդու ինքնատիպ տեսակը, բոլորին օգնելու պատրաստակամությունը: Արթուր եւ Ավետ Սարգսյաններն այն մարդիկ են, ովքեր ապրելով բարեկեցիկ կյանքով, երբեք չեն մեծամտացել, ժամանակի հոլովույթում չեն կորցրել մարդուն հատուկ իրենց արժանիքները եւ, որ ամենազարմանալին է, միշտ մնացել են պարզ, հասարակ, անմիջական, մարդկային, շրջապատին եւ ընկերներին նվիրված: Ոչ մի փողի քսակ չի կարող փոխարինել նրանց մարդկային խղճին:

Ավետը դեռեւս փոքր հասակից փորձում էր մի բանով օգնել դասարանին, նյութապես կարիքավոր դասընկերոջը եւ այդ ամենն անում էր այնքան աննկատ, որ ոչ մեկը չիմանար իր արած քայլի մասին, իսկ սա խոսում է մարդու այն տեսակի մասին, ով չի անում ցուցադրելու համար, այլ անում է խղճի մտոք: Իմ աշակերտն է, եւ լավ գիտեմ նրա հոգում վառվող բարության հրի ջերմությունը, որը ճառագման ուղիներ է փնտրում:

Ես վստահ եմ, որ Ավետ Սարգսյանն այն պատգամավորը կարող է լինել, ով այսօրվա խոստացածը թղթի վրա չի թողնելու, աթոռին չի մեծամտանալու, մեզ ու մեր հոգսերը չի մոռանալու, վստահ եմ, նա շատ հարցեր է լուծելու, ավելի շատ է կառուցելու...

Միանշանակ Ավետ Սարգսյան. ահա իմ կոչն ապրիլի 2-ին քվեարկության գնացող ընտրողին: ■

ԱԼԵՔՍԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ
Հիդրոարտադրական կոոպերատիվի բանվոր

Շինարարի վաստակը մեծ է հայրենիքի շենացման գործում

Ես չէ, որ պետք է ներկայացնեմ Ավետ Սարգսյանին, որպեսզի մարդիկ ճանաչեն, նրան բոլորն են ճանաչում, քանզի աջակից ու նեցուկ է եղել սիսիանցիների մեծամասնությանը, կառուցապատել է ու շենացրել Սիսիան քաղաքն ու մերձակա գյուղերը: Ես պարոն Սարգսյանին ճանաչում եմ երկար տարիներ եւ եղել եմ նրա հետ անմիջական շփման մեջ, աշխատում եմ նրա մոտ արդեն շատ վաղուց: Այնպիսի ղեկավար է, որ չեն գործում խիստ ընդգծված աշխատող-տնօրեն հարաբերությունները, ընդհակառակը, մենք նրան դիտարկում ենք որպես ընտանիքի հայր, ով պատրաստ է իր երեխային օգնել յուրաքանչյուր հարցով: Այո, նա մեր յուրաքանչյուր խնդրանքն ի կատար է ածում, փորձում է ամեն գնով լուծում տալ մեր առջեւ ծառացած խնդիրներին, նույնիսկ երբ հարցն իրենից էլ կախված չէ:

Որպես շինարարի՝ կարող եմ ասել, որ նրա մտքին ու ձեռքին պատկանող յուրաքանչյուր կառույց երբեք չի կարող կասկածի տակ դրվել, որովհետեւ այնքան սրտացավ է մոտենում իր աշխատանքին, այնքան հոգի ու էներգիա է դնում ամեն դրվող քարի մեջ, որ վերջիններս հավերժի կյանք են ստանում: Բնակիչներն ասում են. «Եթե Ավետի կառուցածն է, ուրեմն հավերժ կանգուն է մնալու», նրանք մի վայրկյան անգամ չեն երկմտում, կասկածի տակ չեն դնում Ավետ Սարգսյանի աշխատանքի բարձր որակը:

Ավետի արյան մեջ են մարդկային այդ բարձր հատկանիշները, նրանք՝ հայր, եղբայր, այդպիսին են՝ նվիրվել, աշխատել, օգնել, աջակցել: Ահա այս վարքով են այդ մարդիկ ապրում՝ իրենց հետ ապրեցնելով շատ շատերին:

Վստահ եմ, Ավետ Սարգսյանը մեր հոգսն իրենը դարձրած, խորհրդարանում բարձրացնելու է այդ հարցերը: Հույս ունեմ, որ մենք էլ վերջապես Ազգային ժողովում կտեսնենք մեր պատգամավորին, մեր պաշտպանին, որի կարիքը շատ ենք ունեցել: Այս անգամ կգնանք ընտրության ավելի վստահ, ավելի հպարտ՝ գիտակցելով, որ ընտրում ենք արժանավորին, պաշտպանին: Վերջապես մեր հարցերի պատասխանները կլսենք խորհրդարանում եւ կտեսնենք դրանց լուծումը:

Կոչ եմ անում մեր համայնքների բնակիչներին՝ եկեք լինենք միասնական, չէ՞ որ մեզ համախմբում են մեր հոգսը, մեր խնդիրները, եկեք բոլորս աջակցենք Ավետ Սարգսյանին՝ վստահ լինելով, որ վաղն ունենալու ենք ավելի հզոր, ավելի շենացված համայնքներ:

Մեր ձայնը՝ Ավետ Սարգսյանին: ■

Եղբայրն ապացուցեց, ինքն էլ կապացուցի

Կառուցող հոր կառուցող որդին՝ Ավետ Սարգսյանը, բարձր արժանիքներով օժտված անհատականություն է, ով որդեգրել է կառուցապատելու եւ շենացնելու պատգամը: Այո, Ավետ Սարգսյանը շինարարի իր «կախարդական» փայտիկով արդեն շատ շինություններ է կանգնեցրել, վերանորոգել, գեղեցկացրել, մենք էլ այն պատիվ ունեցողների շարքում ենք, ում հասել է նրա օգնող ու կառուցող ձեռքը. վերանորոգել է Ծղուկի միջնակարգ դպրոցը՝ ուրույն ոճով եւ յուրահատուկ մոտեցմամբ: Այսօր գյուղն ունի շքեղ ու բարեկարգ դպրոց, նույնիսկ ոչ մեկի մտքով չէր անցնում, որ այս հեռավոր գյուղը կարող է ունենալ քաղաքի դպրոցներին ոչնչով չզիջող դպրոց: Վերանորոգման աշխատանքների ընթացքում մենք ավելի լավ ճանաչեցինք Ավետ Սարգսյանին՝ իր ծով համբերությամբ, մարդկային բացառիկ տեսակով, իմացական աշխարհով: Նկատեցինք մի կարեւոր հատկանիշ եւս. նա սրտացավ վերաբերմունք ունի աշխատանքի ու աշխատողի նկատմամբ:

Մենք հավատում ենք Ավետ Սարգսյանին, վստահ ենք, որ նա հենց այն անհատականությունն է, ում աջակցության կարիքն ունենք, ով խորհրդարանում կբարձրացնի սյունեցու առջեւ ծառացած խնդիրները, ով կկարողանա պաշտպանել մեր շահերը, ով մոտիկից ծանոթ է մեր խնդիրներին ու քաջատեղյակ՝ մեր հոգս ու ցավին: Նրա եղբայրը՝ Սիսիան համայնքի ղեկավար Արթուր Սարգսյանը, իր համայնքի բնակիչների հոգսով ապրող, աջակցող ու օժանդակող իր ժառանգական հատկանիշներով արդեն ապացուցել ու ապացուցում է բոլորին, որ իրենք կոչված են օգնելու, շենացնելու, բարեփոխելու մեր երկրամասը: Մենք էլ վստահ ենք, որ ի դեմ Ավետ Սարգսյանի ունենալու ենք ավելի ուժեղ հենարան Ազգային ժողովում:

Նրանք այն մարդու ժառանգներն են, ում աչքը միշտ էլ կուշտ է եղել, ով կանգնած է եղել կարիքավորի կողքին, ով գիտի հարգել, աշխատողին գնահատել:

Քվեարկենք Ավետ Սարգսյանի օգտին:

Ծղուկի միջնակարգ դպրոցի ուսուցչական կոլեկտիվ

Այունյաց երկիր
Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):
«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:
® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 1 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1730, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 09.03.2017թ.:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ: